ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2019թ. N----Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՂԻՇԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.11/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացիական օրենսգրքի 606-628-րդ հոդվածները, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետը, Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N 41-Ն որոշման հավելվածի 45-րդ կետը, 2019 թվականի նոյեմբերի 19-ի «ԵՐ-ՎԱՆ ՍՊՈՐՏ ՀԱՌԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հ. KZ/08 դիմումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ Երևան քաղաքի Եղիշե Թադևոսյան փողոցի հ.11/1 հասցեում գտնվող գույքի վերակառուցման և հիմնանորոգման ծրագրին՝ համաձայն հավելվածի:

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Երևան քաղաքի Եղիշե Թադևոսյան փողոցի հ.11/1 հասցեում գտնվող 1063.0 քմ մակերեսով շինությունները և դրանցով զբաղեցված 10,636.51քմ ընդհանուր մակերեսով հողամասը (այսուհետ՝ գույք) (վկայական 10.07.2019թ. N 10072019-01-0283) 40 (քառասուն) տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրել «ԵՐ-ՎԱՆ ՍՊՈՐՏ ՀԱՌԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ վարձակալ):

3. Գույքի վարձակալության 1.0 քմ մակերեսի ամսական վարձավճարը սահմանել 252 ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով անկախ գնահատողի՝ §Ինեքս¦ ՍՊԸ-ի կողմից գույքի շուկայական արժեքի վերաբերյալ 2019 թվականի հուլիսի 12-ի թիվ-07/1219 գնահատման եզրակացությունը:

4. Սահմանել վարձակալության տալու հետևյալ էական պայմանները.

1) վարձակալը պարտավորվում է գույքի վերակառուցման, հիմնանորոգման, կահավորման և բարեկարգման նպատակով՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում կատարել առնվազն 406,278,000.0 ՀՀ դրամի չափով ներդրումներ՝ հետևյալ պարտադիր ուղղություններով.

ա) նոր ժամանակակից սպորտային դահլիճի կառուցում, մեծահասակների և երեխաների համար նախատեսված լողավազանների կառուցում, ավտոկայանատեղիների ապահովում, հանգստի գոտու կառուցում, տարածքի կանաչապատում, ամբողջ տարածքի բարեկարգում, ջրի, գազի, կոյուղու, էլեկտրամատակարարման և այլ ենթակառուցվածքների ստեղծում,

բ) վարձակալության առաջին երկու տարիների ընթացքում վարձակալին ազատել վարձավճարից,

գ) վարձակալը պարտավոր է սույն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ներդրումների կատարումը հավաստող համապատասխան փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարան՝ ըստ ներդրումների կատարման ժամանակացույցի,

դ) պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման՝ վարձակալի միջոցների հաշվին,

ե) հաշվետու տարվա համար նախատեսված ներդրումային պարտավորությունները պայմանագրով սահմանված ժամկետում չկատարելու կամ մինչև 50 տոկոսը կատարելու դեպքում ընկերությունը պարտավոր է 6 ամսվա ընթացքում կատարել նախատեսված, բայց չկատարած ներդրումներն ամբողջությամբ՝ միաժամանակ Երևան համայնքի բյուջե վճարելով տուգանք՝ չկատարված ներդրումների գումարի 10 տոկոսի չափով,

զ) հաշվետու տարվա համար նախատեսված ներդրումային պարտավորությունները պայմանագրով սահմանված ժամկետում 50 կամ ավելի տոկոսով կատարելու, սակայն ամբողջությամբ չկատարելու դեպքում ընկերությունը պարտավոր է 3 ամսվա ընթացքում կատարել նախատեսված, բայց չկատարած ներդրումներն ամբողջությամբ՝ միաժամանակ Երևան համայնքի բյուջե վճարելով տուգանք՝ չկատարված ներդրումների գումարի 5 տոկոսի չափով,

է) վարձակալի կողմից սույն որոշման 2-րդ կետում նշված գույքի ոչ նպատակային օգտագործման կամ սույն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետի ե) և զ) պարբերություններով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում սույն որոշման հիման վրա կնքված պայմանագիրը ենթակա է լուծման,

ը) արգելվում է վարձակալության պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները փոխանցել այլ անձի, վարձակալության իրավունքը գրավ դնել կամ որպես ավանդ ներդնել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում,

թ) միայն վարձատուի համաձայնությամբ և նրա կողմից սահմանված պայմաններով ու ժամկետներում գույքը կարող է տրվել ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՂԻՇԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.11/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 606-628-րդ հոդվածների, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N 41-Ն որոշման հավելվածի 45-րդ կետի՝ սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևանի քաղաքապետին թույլատրել Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Երևան քաղաքի Եղիշե Թադևոսյան փողոցի հ.11/1 հասցեում գտնվող 10,636.51քմ ընդհանուր մակերեսով հողամասը և 1063,0քմ մակերեսով անշարժ գույքը (վկայական 10.07.2019թ. N10072019-01-0283) 40 (քառասուն) տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրել «ԵՐ-ՎԱՆ ՍՊՈՐՏ ՀԱՌԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

Անկախ գնահատողի §Ինեքս¦ ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի հուլիսի 12-ի թիվ-07/1219 եզրակացությամբ գնահատվել է վերոնշյալ հասցեում գտնվող գույքը և հողամասը: Նշված հասցեում գտնվող գույքը ներկայումս նպատակային նշանակությամբ հնարավոր չէ օգտագործել: Այդ պատճառով ընդհանուր գույքի վարձակալության 1.0 քմ մակերեսի ամսական վարձավճարը նախագծով նախատեսվում է սահմանել 252 ՀՀ դրամ՝ հաշվի առնելով, որ ծրագրով նախատեսվում է քանդել առկա գույքը և կառուցել նոր շինություններ:

Տարածքում առկա է երկու լողավազան: Մեծահասակների և երեխաների համար նախատեսված լողավազանների մակերեսը կազմում է համապատասխանաբար՝ 404.3քմ և 67.4քմ: Տարածքում կա նաև երկու շինություն, հիմնական մասնաշենքը և օժանդակ շինությունը, համապատասխանաբար՝ 308քմ և 168.2քմ, մարզասրահ, պարիսպ, ենթակայան:

Նշված տարածքը նպատակային նշանակությամբ օգտագործելու համար անհրաժեշտ է իրականացնել հիմնանորոգման, վերակառուցման և բարեկարգման աշխատանքներ:

Այդ նպատակով՝ սույն որոշման նախագծով սահմանվում է, որ «ԵՐ-ՎԱՆ ՍՊՈՐՏ ՀԱՌԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ վարձակալ) պարտավորվում է գույքի վերակառուցման, հիմնանորոգման, կահավորման և այն ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու նպատակով՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում կատարել 406,278,000.0 ՀՀ դրամի չափով ներդրումներ:

Գույքի վարձակալության 1.0 քմ մակերեսի ամսական վարձավճարը նախագծով նախատեսվում է սահմանել 252 ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով անկախ գնահատողի՝ §Ինեքս¦ ՍՊԸ-ի կողմից գույքի շուկայական արժեքի վերաբերյալ 2019 թվականի հուլիսի 12-ի թիվ-07/1219 գնահատման եզրակացությունը:

Շինմոնտաժային աշխատանքները նախատեսվում է ավարտել երկու տարվա ընթացքում, որի ընթացքում, Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ պարոն Տ. Ավինյանի հ.N04/03,7/42110-2019 գրության առաջարկությամբ նախատեսվում է վարձակալին ազատել վարձավճարից:

Ծրագրի արդյունքում նախատեսվում է ստեղծել շուրջ 45 աշխատատեղ:

Անհրաժեշտ է կառուցել նոր ժամանակակից սպորտային համալիր, նվազագույնը երկու լողավազան՝ նախատեսված մեծահասակների և երեխաների համար, անհրաժեշտ է իրականացնել տարածքի բարեկարգում, կանաչապատում և հանգստի գոտու կառուցում, ջրի, գազի, կոյուղու, էլեկտրամատակարարման և այլ ենթակառուցվածքների ստեղծում, արտաքին լուսավորության անցկացում, ադմինիստրատիվ և սպասարկման շենքերի կառուցում և այլն:

Սույն որոշման նախագծով նախատեսվում է սահմանել, որ մրցույթում հաղթող ճանաչված վարձակալի հետ կնքվելիք պայմանագրում պետք է ներառվեն մի շարք պարտադիր պայմաններ: Մասնավորապես. Վարձակալի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում սույն որոշման հիման վրա կնքված պայմանագիրը ենթակա է լուծման: Որոշման նախագծով սահմանվում են նաև այլն պարտադիր պայմաններ:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ Երևան քաղաքի ավագանուն է ներկայացվում «Երևան քաղաքի Եղիշե Թադևոսյան փողոցի h.11/1 հասցեում գտնվող գույքի վերակառուցման և հիմնանորոգման ծրագրին հավանություն տալու, գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՂԻՇԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.11/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի Եղիշե Թադևոսյան փողոցի հ.11/1 հասցեում գտնվող գույքի վերակառուցման և հիմնանորոգման ծրագրին հավանություն տալու, գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՂԻՇԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.11/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի Եղիշե Թադևոսյան փողոցի հ.11/1 հասցեում գտնվող գույքի վերակառուցման և հիմնանորոգման ծրագրին հավանություն տալու, գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում վարձակալության 3-րդ տարվանից սկսված տարեկան սպասվում է շուրջ 32,164,806.2 ՀՀ դրամ մուտք, իսկ ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի ___-ի
N ___-Ա որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՂԻՇԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.11/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳԻՐ

1.ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ ԿԱՌՈՒՑՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

(ընդհանուր ներդրումային փաթեթը ըստ նախնական հաշվարկների կազմում է շուրջ **406,278,000.0 ՀՀ դրամ**)

Ծրագրով նախատեսվում է կառուցել Սպորտային համալիր Եղիշե Թադևոսյան փողոցի հ.11/1 հասցեում: Նախատեսվում է վերակառուցել և գործարկել հին և կիսավեր մեծ և փոքր լողավազանները, հիմնովին վերակառուցել լողավազանների վարչական և սպասարկող կիսաքանդ կառույցը, հարակից տարածքում կառուցել սպորտային դահլիճ՝ կիրառելով նորագույն տեխնոլոգիաներ և նյութեր, մեր երկիրը արտասահմանում ներկայացնող սպորտսմենների վերապատրաստման և մարզումներ իրականացնելու նպատակով, հարակից տարածքում կգործի նաև սրճարան, բազմաբնույթ մարզասրահներ, բժշկական հսկողության լաբորատորիա, տարածքը ամբողջովին կկանաչապատվի և կունենա գեղեցիկ տեսք, կվերակառուցվեն կոմունիկացիաները, ջրատարները, հարակից արգելապատնեշները և այլն:

Համալիրը կապահովի առնվազն 45 աշխատատեղ:

Դպրոցականները և ուսանողները կօգտվեն մատուցվող ծառայություններից զգալի զեղչերով, իսկ առանձին դեպքերում անվճար, հաշվի առնելով նրանց սոցիալական և այլ պայմաններ: Արցախյան ազատամարտի մասնակիցները, իրենց ընտանիքի անդամները կունենան հատուկ կարգավիճակ:

2. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. Ճարտարապետահատակագծային առաջադրանք 15-20 օր /տարածքի հատկացումից անմիջապես հետո/
2. Նախագծային աշխատանքներ 2-3 ամիս.
3. Շինարարական մոնտաժային աշխատանքներ 2 տարի:

3. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Սպորտային համալիր, լողավազան

<u>Մետաղական կոնստրուկցիա</u>

Մեծ լողավազանի համար՝	13 000 000 ՀՀ դրամ
Փոքր լողավազանի համար՝	4 680 000 ՀՀ դրամ
Լոգիստիկ ծախսեր՝	5 200 000 ՀՀ դրամ
Սրճարանի համար՝	5 000 000 ՀՀ դրամ
Տանիքի համար՝	5 000 000 ՀՀ դրամ
Այլ՝	7 000 000 ՀՀ դրամ

Ընդամենը մետաղական մասը՝ 39 880 000 ՀՀ դրամ

<u>Կարկասի երեսապատում</u>

Մեծ լողավազան՝	15 000 000 ՀՀ դրամ
Փոքր լողավազան՝	6 000 000 ՀՀդրամ
Սրճարանը՝	5 000 000 ՀՀ դրամ

Ընդամենը՝ 26 000 000 ՀՀ դրամ

<u>Լողավազանի բետոնային աշխատանքներ</u>

Մեծ և փոքր լողավազաններ՝ 151մ^3 x 35000 = 5 285 000 ՀՀ դրամ

Ամրաններ՝ 22 տոննա x 300 000 = 6 600 000 ՀՀ դրամ
Այլ ծախսեր՝ 2 000 000 ՀՀ դրամ
Ընդամենը՝ 13 885 000 ՀՀ դրամ

Լողավազանի կահավորում
Համապատասխան սարքավորումներով՝ 26 813 000 ՀՀ դրամ
Այլ ծախսեր՝ 4 000 000 ՀՀ դրամ
Ընդամենը՝ 30 813 000 ՀՀ դրամ

Պոլիկարբոնատի և համալրող դետալների ձեռքբերում, հավաքման աշխատանքներ պոլիկարբոնատով
Ընդամենը՝ 17 000 000 ՀՀ դրամ

Ընդհանուր առաջին տարվա ընթացքում նախատեսվում է կատարել 127 578 000 **ՀՀ դրամ ներդրում**:

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Օդափոխման համակարգ՝	ա/ լողավազան	- 20 000 000 ՀՀ դրամ
	բ/ սպորտային մասնաշենք	☐ 3 000 000 ՀՀ դրամ
Ջեռուցում	ա/ լողավազան	- 5 000 000 ՀՀ դրամ
հովացում	բ/ սպորտային մասնաշենք	☐ 3 000 000 ՀՀ դրամ

Ընդամենը՝ 31 000 000 ՀՀ դրամ

Վարչական մասնաշենք

Շինարարական ծավալային աշխատանքներ
Ընդամենը՝ 60 000 000 ՀՀ դրամ

Բարեկարգման աշխատանքներ

Սալիկապատում, կանաչապատում, կահավորում համապատասխան աթոռներով, սպորտային մինի գույքով, տրենաժորներով և մանկական սպորտային կարուսելներով: Հանգստի գոտու ձևավորում:

Ընդամենը՝ 50 000 000 ՀՀ դրամ

Սպորտային և այլ գույք

1) Սպորտային գույք՝ 30 000 000 ՀՀդրամ
2) Համակարգիչներ՝ 6 000 000 ՀՀ դրամ
3) Անցակետերի և տարածքի վերահսկողական սարքավորումներ՝ 5 000 000 ՀՀ դրամ
4) Հատուկ գոտու ստեղծման անվտանգություն, հակահրդեհային համակարգ, ահազանգման համակարգ, հրդեհասիճման համակարգ՝ 10 000 000 ՀՀ դրամ
5) Ներքին աշխատանքները կառավարելու համար Հատուկ ծրագրերի ձեռքբերում, 1 500 000 ՀՀ դրամ
Ընդամենը՝ 52 500 000 ՀՀ դրամ

Հողային աշխատանքներ, երեսապատում, կահավորում, պատերի հավաքում և այլն ընդհամենը
Ընդամենը՝ 57 200 000 ՀՀ դրամ

Կիսաքանդ շենքի վերակառուցում՝ հիմնային աշխատանքներ
Ընդամենը՝ 3 000 000 ՀՀ դրամ

Կապիտալ աշխատանքներ
Ընդամենը՝ 25 000 000 ՀՀ դրամ

Ընդհանուր երկրորդ տարվա ընթացքում նախատեսվում է կատարել 278 700 000 **ՀՀ դրամ ներդրում**:

Ընդամենը՝ շուրջ *406 278* ***000 ՀՀ դրամ***: